# ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻԻ ՔԱՆԻ ՄԸ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

*Ներսէս ծառայ Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգային նախամեծար աթոռոյ արարատեան մայր եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի։*

Սրբազան Սահակ եպիսկոպոս վիճակաւորի.հռչակաւոր վանից ամենայարգ դամբարանի առաջին Լուսաւորչի Հայոց Սրբազան Առաքելոյն Թադդէոսի յիշեցուցանեմ զհրամանն քրիստոսական. «Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ»։ Եւ զպատուիրանն Առաքելական. «Ամենայն ինչ փորձեցէք զբարին ընկալարուք» և յատկապէս ես վասն եպիսկոպոսաց ընթեռնումք զգիր նորա առ Տիմոթէոս սիրեցեալն իւր հաւատարիմ է բանս. «Եթէ ոք եպիսկոպոսութիւն ցանկայ բարւոք գործոյ ցանկայ այլ պարտ է եպիսկոպոսին լինել հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ, մի թշնամանող, մի հարկանող, այլ հանդարտ, մի կռւող, մի արծաթասէր, մի մատաղատունկ, զի մի հպարտացեալ ի դատաստան սատանայի անկանիցի։»

Ամենեքին այսօրիկ գոլով Աստուածային աւանդք հարկ է ամենայն աշակերտելոց այսոցիկ Աստուածային պատուիրանաց խոկալ միշտ և ո՛չ անհոգանալ արդիւնաւորել զայնս առ որ վկայէ վասն իւր Սաղմոսերգու Մարգարէն. «Խորհէի ի պատուիրանս քո զոր ո՛չ(!) սիրեցի» և վասն առաջնորդական գերարժանաւորութեանց ձայնէ Արքայն Սողոմոն, «Որ հանճարեղն է զառաջնորդութիւն ստասցի»։ Եւ առ այս ամենայն հարկադրեալ ի մերոյ անձնական և ազգական պարտաւորութեանց հարցանեմք ի ձեր Սրբազնութիւնէ թէ ցայս վայր հասակի կենաց ձերոց զո՞ր ձեր աստիճան իւրումն արժանաւորութեան ունիք հանդիսացեալ ի տեսութիւն աչաց կամ ի լուր ականջաց ի գովութեան ձերոց աստիճանաց և ի փառաւորութիւն ձերում անձին կամ աստիճանի այժմ. ի սմին հասակի ձերում սրբազնութեան մերձ ի ծերութեան մեք ոչ գոլով իսպառ անծանօթ անցելոցն ձերում կենցաղավարութեան ունկընդրութեամբ Առաքելական քարոզութեանցն։ «Մինչ զտղայն էի իբրև զտղայ խորհէի իբրև զտղայ խօսէի այլ յորժամ եղէ այր՝ զտղայութեան ի բաց խափանեցի»։

Ցորդորեալ ի մերոյ մեծայոյս ակնկալութեանց, թէպէտև բազմաց էր ձայնն թէ անպտուղ է լինելոց յոյսն իմ, այլ այնու ամենայն յաղթանակեալ ի խղճէ մտաց մերոց խորհրդածութեամբ ինչ ինչ արժանաւոր հանգամանաց երկրորդ արարեալ զդատողութիւնն բազմաց ամբարձաք զձեզ յԱստիճան բարձրագոյն պատուոյ Եպիսկոպոսութեան և կարգեցաք վիճակաւոր վանից սրբոյ Առաջին Լուսաւորչի Հայաստանեայց զերահրաշ վանիցն և վիճակի նորա, մեծաւ ակնկալութեամբ մերով թէ մարդասիրութիւն մեր առ ձեզ ունի պարտաւորել զձեզ համաձայն քարոզութեանցն Աստուածայնոց լինել կշռադատ վասն ամենից ձերոց անցելոցն որպխտութեանց և ներկայականացն և զգուշանալ ոչ ըստ կերպի ձերոյն ցայս վայր անխորհուրդ կենցաղավարութեանց մատնել ի դատապարտութիւն զիտնոց և ազխտաց։ Բայց առ այս ամենայն ասա՛ դու ինքն մեզ, թէ որո՞յ վիճակաւորաց զկառավարութիւնն եղեալ ի ձեր նպատակ իսկ և իսկ ընդ մտանելդ ի վիճակդ ձեզ հաւատացեալ ոչ անպատկան ձերում հոգևոր իշխանութեանց ծանուցեալ՝ փառք ձեզ համարեցիք զերծուլ զհերսն երկուց կանանց և մրել զերեսն նոցա և վրդովել այնու զմիտս Արքայորդոյն որ պատուելով զհովանաւորութիւն հզօր կայսերութեան ամենայն ռուսաց փոխանակ իւրում թագաւորական բարձրութեան վերապատկանեալ վրէժխնդրութեանց զովանի քաղաքավարութեամբ արժան դատեցաւ իւրումն բարձրութեան վայելչական քաղաքավարութեամբ վասն ձեր ապօրէն իշխանութեանց գործադրութեան խնդրել զիրաւունս ի մեծապատիւ Գեներալ կօնսօլէ մեծ կայսերութեան ամենայն ռուսաց որ ի Դաւրէժ և նա մատուցեալ զայն ի Սաւէտն ըն[դ]հանրական կառավարութեան յայս կոյս Կաւկասեան սահմանաց և Նախապատիւն Սաւէտի կամ խորհրդարանի Կնիազ Վասիլ Բէհբուդեանց զայն գրութեան կօնսօլին առաքեալ առ մեզ, մինչև ցայսօր ես սպասէ մերում տնօրէնութեանց։ Եւ ի վերայ

այնր որ ձեր արդարադատութիւն ստիպեաց զձեզ զՅովսէփ Թադդէոսեան պաշտօնեայ հանգուցեալ սրբազան Նիկողայոս եպիսկոպոսի առանց նախ օրինաւոր վերաքննութեանց և ապացուցարար բացայայտութեանց հարստութեանց հանգուցեալ Նիկողայոս եպիսկոպոսի և վանից սրբազան Առաքելոյն Թադդէոսի առանց որոց իբրև անկարելեացն է ի կարգի հաստատել զգողութիւն հարստութեանց վանիցն և վիճակաւորին յետ վկայելոյ ձեր թէ չորս ամաց հարկն վանից գիւղի չէ վճարեալ Նիկողայոս եպիսկոպոսն և եղբայր նորա Յովսէփն տիրապետեալ վանիցն և ամենայն կառավարութեանց առաջնորդականաց իբրև կալանաւոր են ունեցեալ զՍրբազան Նիկողայոս եպիսկոպոս վիճակաւորն ոչ բնաւ եղեալ ի կչիռ մտաց ձերոց որով իշխանութեամբ իւրեանց են կալանաւորեալ զվիճակաւորն հազարաւոր բազմութեան հայոց Ատրպատականայ ծառայք նորա կամ պաշտօնատարք կարգեալք առ ի նմանէ յիշեալ երկոքին եղբարքն։ Եւ զիարդ ոչ զարթոյց զմիտս ձեր առաջնորդական հանճարաւոր խորհրդածութեան ձեր, թէ դիցուք թէ կամ ո՛չ զգաց հանգուցեալ վիճակաւորն վասն կողոպտելոյ նոցա զհարստութիւն իւր և վանիցն, կամ գոլով նա կալանաւորեալ յիւրոց պաշտօնատարաց չկարաց վստահիլ ստանալ ի նոցունց զհարստութիւնսն իւր անձնականաց կամ վանիցն, այլ զի չորսամեայ հարկն գիւղի պահանջէր խանն Մակուայ, զիա՞րդ պարտի համարիլ, քան թէ հանգուցեալն զաղքատութիւն իւր և վանիցն պատճառ ցուցանէր յիշեալ խանին ընդէ՞ր զայն ո՛չ բացայայտէր թէ որպէս զամենայն զհարստութիւն իւր և վանիցն յափշտակեալ են երկոքին եղբարքն՝ ունելով կալանաւորեալ կամ սատանեցուցեալ զինք այնպէս և զհարկ գիւղին նոքա ունին ստացեալ զամս չորս և ինքն չունելով զզօրութիւն պահանջելոյ զայն ի նոցունց և հատուցանելոյ ինքեան զորմէ տեղեկանալով խանն զօրաւոր նա ինքն իւրով զօրութեամբ կարող է ստանալ ի նոցանէ զիւրն նա, իսկ և վանքականն և անձնականն վիճակաւորին այլ առանց ամենայն եպիսկոպոսական և առաջնորդական արժանաւորութեանց ի վերայ ձեր կարծեաց կամ այլոց ի վերայ ձեր. նշանակեցելոց ընդդէմ Քրիստոսական և առաքելական պատուիրանացն թէ պարտ է Եպիսկոպոսին լինել այսպէս և այնպէս, և ոչ հարկանող. դուք թօթափեալ էք զեղնգունսն ոտից պաշտօնատարի քում նախորդի, ոչ բնաւ զմտաւ ածեալ թէ և ձեր յաջորդք ունին առ վաղիւն թօթափել զեղնգունսն՝ զուցէ և ձեռաց ես ձերոց պաշտօնատարաց։

Եւ զայս յայս նուազ առանց բացայայտութեան այլոց ձեզ գրեմ առանձնութեամբ և զվերջինն յայտնեմ ձեզ զի թէ ոչ օգնեսցի ձեզ շնորհն Աստուծոյ վասն արդարացուցանելոյ զիմ զայս որով զտանիք դուք եպիսկոպոսացեալ և առաջնորդացեալ երրորդելն ձեր զայսպիսի ձեր անհանճար գործ բարձրաձոցն հռչակաւ անկանիլ ունիք ընդ արդարութեամբ օրինաց զի անարժան է որպէս անուան մեր առաւել ես անուան սրբոյ մօրն լուսոյ Կաթուղիկէ Էջմիածնի զանձն անհանճար կարգել ի պաշտօնի Քրիստոսական հօտի առ որ ձայն է ինքն Քրիստոս. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց և ոչ զհօտն դնել ի վերայ անձին իւրոյ։

Յամի ազգական 1301, և փրկչական 1852
Համր. 383. Նոյեմբեր 29 ի Ս. Էջմիածին

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՆԵՐՍԷՍ

(10) Հրատ. Կ. Ց. ԲԱՍՄԱՋԵԱՆ

## ՆՕԹՔ ԵՒ ՆԻՇՔ

Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան Հոգեւոր Դպրանոցի Վարչութենէն ստացած ենք, տպագրութեան համար, նոյն Հաստատութեան 1937 տարուայ գործունէութեան վերաբերեալ Տեղեկագիր մը։ Այնքան շահեկան կը գտնենք այդ գրութեամբ ներկայացուած ձեռնարկը, որ աւելորդ չենք նկատեր գէթ հարեւանցի ծանօթութիւն մը տալ անոր մասին, քաղելով այդ Տեղեկագիրէն։

Ջուղայաբնակ Մանուկ Յորդանանեան 1875ին, կտակով իր հարստութեան մէկ փոքր մասը թողած է, իբրեւ հիմնադրամ, Ջուղայի մէջ հաստատելի Հոգեւոր Դպրանոցի մը համար։ Գումարը, այն ատեն Java Bankի հինգ շահաբաժին միայն կազմած, այժմ յանգած է 53 շահաբաժինի, որոնցմէ այսօր կ'արտադրէ տարեկան 1500–4500 գիլդըր հասոյթ։

Հակառակ միշտ ալ զգացուած փափաքներու, զանազան դժուարութեանց պատճառաւ, այս կտակը ամբողջ 60 տարիներ չէր կրցած իրագործուիլ, մինչեւ որ Տ. Թէոդորոս Իսահակեան, 1932ին, այն ա-